Շրջակա միջավայրի նախարար

պարոն Հակոբ Սիմիդյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**1.Գործուղվող անձի անունը, ազգանունը**

Ռուզաննա Գրիգորյան

**2.Զբաղեցրած պաշտոնը**

Շրջակա միջավայրի նախարարության միջազգային համագործակցության վարչության պետ

**3.Գործուղման վայրը և ժամկետը**

Շվեյցարիայի Համանադաշնություն (Ժնև)

2023 թվականի մայիսի 25-ից 26-ը

**4. Հրավիրող կողմը**

ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական համագործակցություն

**5. Գործուղման նպատակը**

Մասնակցություն ՄԱԿ ԵՏՀ «Կթություն հանուն կայուն զարգացման» (ԿՀԿԶ) Ղեկավար կոմիտեի 18-րդ նիստին

**6. Քննարկված թեմաները (հարցերը)**

Քննարկումները մեկնարկել են 2022թ. հոկտեմբերի 5-7 Նիկոսիայում (Կիպրոս) կայացած «Շրջակա միջավայր Եվրոպայի համար» նախարարական հանդիպման շրջանակներում տեղի ունեցած Կրթության և Շրջակա միջավայրի նախարարների բարձրաստիճան երրորդ հանդիպման արդյունքների ներկայացմամբ: Դրանցից առավել կարևոր են.

i) ՄԱԿ ԵՏՀ Կրթություն հանուն կայուն զարգացման 2021-2030թթ. ռազմավարության (այսուհետ՝ Ռազմավարություն) հաստատումը,

ii) Նախարարական հռչակագիրը և այն գործողությունները, որոնք հատկորոշվեցին իրականացման հաջորդ շրջափուլում իրագործման նպատակով:

Ղեկավար կոմիտեին ներկայացվեցին Ռազմավարության իրականացման աջառընթացը, վերջինիս շրջանակներում մշակված քաղաքականության, գործողությունների, ծրագրերի և նախաձեռնությունների համատեքստում: Անդամ երկրներից յուրաքանչյուրս հանդես եկանք զեկուցմամբ՝ ներկայացնելով ազգային մակարդակում իրականացված գործողությունները, մասնավորապես Ռազմավարության հիմնական 4 ուղղությունների համատեքստում՝

1. որակյալ կրթություն և ԿՀԿ
2. հասստատության ամբողջական մոտեցում և ԿՀԿԶ
3. թվայնացված կրթություն, տեղեկատվություն և հաղորդակման տեխնոլոգիաները և ԿՀԿԶ
4. ձեռներեցություն, աշխատունակություն, նորարարություն և ԿՀԿԶ:

Մինչև 2023թ. ավարտը նախատեսվում է մեկնարկել պարտադիր հաշվետվությունների 5-րդ շրջափուլը:

**7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված և քննարկված հարցերը**

Նիստի ընթացքում հաստատվեց հաշվետվության ձևաչափի նախագիծը և ուղեցույցները: Ազգային մակարդակով իրականացված գործողությունների վերաբերյալ ներկայացված հաշվետվությունների հիման վրա կմշակվի գնահտման հաշվետվությունը, որը կունենա նույն կառուցվածքն, ինչ նախորդ հաշվետվողականության շրջափուլերի արդյունքում մշակված գնահատման զեկույցները:

Համաձայն նախապես հաստատված օրակարգի՝ նիստի ընթացքում քննարկվեցին նաև Տարածաշրջանային համագործակցության շրջանակը հանուն Կայուն զարգացման, Չափորոշիչների հարցերով հատուկ աշխատանքային խմբի կողմից իրականցված աշխատանքների արդյունքները, ինչպես նաև ներուժի հզորացմանն ուղղված գործողությունների պլանավորումը, որոնք կօժանդակեն նոր Ռազմավարության իրականացման շրջանակի իրագործման վերաբերյալ ազգային հաշվետվողականության ներկայացման արդյունավետության բարձրացմանը: Վերջին հարցի շրջանակներում Չափորոշիչների հարցերով հատուկ աշխատանքային խմբի համակարգողի կողմից

ներկայացվեց առաջարկ հեռավար և փուլային աշխատաժողովների իրականացման վերաբերյալ, որոնք կիրականացվեն փորձագետների կողմից և միտված կլինեն աջակցելու ազգային համակարգողներին արդյունավետ կերպով կազմակերպելու ազգային հաշվետվողականության գործընթացը՝ հաստատված ձևաչափով և մեթոդոլոգիայով ներկայացնելու համար:

Ներկայացվեց նաև Ռազմավարության իրականացման աշխատանքային ծրագրի նախագիծը, որը ներառում է 2015թ. անդին իրակագործման ժամանակահատվածը: Փաստաթուղթը սահմանում է գործողությունների ճանապարհային քարտեզ, որոնք պետք է նախաձեռնվեն հաջորդ 3 տարիների ընթացքում (2021-2025թթ. ժամանակահատվածի համար) և համաձայնեցված լինեն մինչև 2030թ. ԿՀԿՌ գլոբալ շրջանակի միջնաժամկետ գործողությունների հետ՝ ազգային և տարածաշրջանային մակարդակներում Ռազմավարության հետագա իրականցման համար:

Քննարկվեց նաև առաջարկը մշակելու գործողությունների շրջանակ՝ Աշխատանքային ծրագրում ներառված հաստատության ամբողջական մոտեցման իրականացման նպատակով, ներառյալ ուղեցույցների և ձեռնարկի մշակում:

Ներկայացվեց նաև 2023 կամ 2024թ. նախատեսվող ներուժի հզորացման առաջին միջոցառման հայեցակարգային առաջարկը Շվեյցարական Ծրագրի ներքո, որն ուղղված կլինի *Ռազմավարության չորրորդ ուղղության՝ ձեռներեցություն, աշխապունակություն, նորարարություն և ԿՀԿՌ* իրականացմանը: Ղեկավար կոիտեի անդամներին առաջարկ եղավ արտահայտել հետաքրքրություն մասնակցության վերաբերյալ՝ ֆինանսական աջակցության կամ բնեղեն ներդրմամբ՝ օրինակ, տրամադրելով փորձագիտական աջակցություն կամ հյուրընկալելու միջոցառումը:

Անդրադարձ եղավ նաև երիտասարդների ներգրավմանը ԿՀԿՌ գործընթացում: Քննարկվեց հնարավորությունը հիմնելու երիտասարդներից կազմված փորձագիտական մարմին: ՄԱԿ ԵՏՀ ԿՀԿՌ երիտասարդական հարթակի համակարգողի կողմից ղեկավար կոմիտեի հաստատմանը ներկայացվեց վերոնշյալ մարմնի տեխնիկական

առաջադրանքը և գործողությունների ծրագիրը 2023թ. ընթացքում տարածաշրջանում իրականացնելու համար:

**Հանդես եմ եկել զեկույցով՝** Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին ՀՀ օրենք –փոփոխություններ և լրացումներ:

**8.Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Ղեկավար կոմիտեին ներկայացվեց հնարավորությունը անդամների կողմից հնարավոր աջակցության վերաբերյալ ներառյալ բնեղեն ներդրումը հաշվետվությունների և այլ տպագրությունների հրատարակման հարցում, ներառյալ 2021-2025թթ իրականացման շրջափուլում նախատեսվողները: 2024թ. համար նախատեսվում է 3 հրատարակում՝

- Գործնական ուղեցույց ամբողջական հաստատության/ դպրոցական մոտեցման իրականացման համար
- Ուղեցույց ձեռնարկ 21-րդ դարի կոմպետենցիաներ նորարարության և ձեռներեցության համար
- Երիտասարդների իրավունքների և հնարավորությունների ընդլայնում՝ անցում խոսքերից գործողության:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

**Հաստատվեց** ՄԱԿ ԵՏՀ Կրթություն հանուն կայուն զարգացման 2021-2025թթ. ռազմավարության գործողությունների ծրագրի նախագիծը:

Շրջակա միջավայրի նախարարության
Միջազգային համագործակցության վարչության պետ

Ռուզաննա Գրիգորյան